ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/264

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.10.2021թ. թիվ 26/26-1/16798-2021 գրությամբ «Նաիրի Ալանիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 07.10.2021թ. թիվ ՊՆ/02/5396-2021 գրության հիման վրա, 14.10.2021թ. թիվ 26/26-1/16798-2021 գրությամբ նախաձեռնել է «Նաիրի Ալանիկա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Նաիրի Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Նաիրի Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/264 ընթացակարգի շրջանակներում 19.10.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.10.2021թ. թիվ ՊՆ/02/5396-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն: Վերջինիս կողմից ներկայացված հայտի N 1.1 հավելվածում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, 20-րդ և 31-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ սույն ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ: Սահմանված կարգով էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցմամբ, սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նշված մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունները վերջինիս կողմից չեն շտկվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.10.2021թ.-ին կայացած նիստում «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի հայտը՝ ընթացակարգի 20-րդ և 31-րդ չափաբաժինների մասով գնահատել է անբավարար և մերժել է:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կից ուղարկվում են վերը նշված մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/264 ընթացակարգի շրջանակներում 19.10.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/264 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/264 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 28.09.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը շարունակելով աշխատանքներն արձանագրել է, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից 20-րդ չափաբաժին՝ «CO2 աբսորբեր», ապրանքատեսակի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝ Հավելված 1.1-ով առաջարկվել էր «H2O» /խոնավություն/ 13-17%, այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվել էր «H2O» /խոնավություն/ 15.2%-ից ոչ ավել», ուստի մասնակցի կողմից առաջարկված «13-17%» ընդունելի չէ, քանի որ հրավերով պահանջված «15.2%-ից ոչ ավել», տիրույթից բարձր ներկայացնելու պարագայում այն չի համապատասխանի հրավերի պահանջներին: Ուստի անհրաժեշտ է կատարել շտկում և «H2O» /խոնավություն/ ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

31-րդ չափաբաժին՝ «Կոննեկտոր շնչական, գոֆրեային անկյունային, բրոնխոսկոպի պորտով» ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջվել է «գոֆրեաձև 90*», սակայն «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող

ապրանքի ամբողջական նկարագրում Հավելված 1.1-ով առաջարկվել՝ «գոֆրեաձև 90-105*», ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ուստի անհրաժեշտ է կատարել շտկում և առաջարկվող ապրանքը ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն արձանագրել է, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված առաջարկով ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված 1.1-ում արձանագրած անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը տեխնիկական խնդրի պատճառով էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ուղարկվել է 29.09.2021թ., ուստի հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց 29.09.2021թ.-ին ևս մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը /30.09.2021թ./ շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.09.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն 01.10.2021թ. կայացած նիստում արձանագրել է, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունները և որոշում է կայացրել վերջինիս հայտը 20-րդ և 31-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.10.2021թ. թիվ 26/26-1/16798-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 07.10.2021թ. թիվ ՊՆ/02/5396-2021 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե ***<u>հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***<u>, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն</u>***

<u>օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u> Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 28.09.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը շարունակելով աշխատանքները արձանագրել է, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից 20-րդ չափաբաժին՝ «CO2 աբսորբեր», ապրանքատեսակի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝ Հավելված 1.1-ով առաջարկվել էր «H2O» /խոնավություն/ 13-17%, այնինչ ընթացակարգի հրավերով պահանջվել էր «H2O» /խոնավություն/ 15.2%-ից ոչ ավել», ուստի մասնակցի կողմից առաջարկված «13-17%» ընդունելի չէ, քանի որ հրավերով պահանջված «15.2%-ից ոչ ավել», տիրույթից բարձր ներկայացնելու պարագայում այն չի համապատասխանի հրավերի պահանջներին: Ուստի անհրաժեշտ է կատարել շտկում և «H2O» /խոնավություն/ ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

31-րդ չափաբաժին՝ «Կոննեկտոր շնչական, գոֆրեային անկյունային, բրոնխոսկոպի պորտով» ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջվել է

«գոֆրեաձև 90*», սակայն «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում Հավելված 1.1-ով առաջարկվել՝ «գոֆրեաձև 90-105*», ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ուստի անհրաժեշտ է կատարել շտկում և առաջարկվող ապրանքը ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն արձանագրել է, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված առաջարկով ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված 1.1-ում արձանագրած անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը տեխնիկական խնդրի պատճառով էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ուղարկվել է 29.09.2021թ., ուստի հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց 29.09.2021թ.-ին ևս մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը /30.09.2021թ./ շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 29.09.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության համաձայն 01.10.2021թ. կայացած նիստում արձանագրել է, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել արձանագրված անհամապատասխանությունները և որոշում է կայացրել վերջինիս հայտը 20-րդ և 31-րդ չափաբաժինների մասով անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի ***<u>նորմը մեկնաբանվում է</u>՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ <u>ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից,</u>*** ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի

սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը ***նույն օրը*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Վերոգրյալ նորմի բովանդակությունից հետևում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ

անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարի համար սահմանված է էլեկտրոնային եղանակով <u>նույն օրը</u> դրա մասին մասնակցին <u>ծանուցելու պարտականություն</u>:

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում դրանք չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ

իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ գործով առկա փաստական հանգամանքները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստի թիվ 3 արձանագրությամբ ***28.09.2021թ.*** արձանագրել է Ընկերության կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություն, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ Ընկերությանը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է ***29.09.2021թ***., այսինքն՝ Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետի և իրավական որոշակիության սկզբունքների պահպանման պահանջների խախտմամբ, որպիսի պայմաններում Ընկերությունը չէր կարող ունենալ որևէ իրավական ակնկալիք առ այն, որ իրեն կարող է ներկայացվել շտկում կատարելու պահանջ:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի և հանգեցնել վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.10.2021թ. թիվ 26/26-1/16798-2021 գրությամբ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**